- Weekly consolidated transportation from Europe
- Customs clearance services (License ՊԼ-5189)
- Heavy lift transportations
- Forwarding services all over the world by all modes
- Full set of services, including packing, customs clearance, warehousing, loading/unloading and transportation



ՀՀ, Երևան, Հանրապետության փող. 22 շ, ք.4 տարածք  
22 Hanrapetutyán str., office N4, Yerevan, RA

հեռ./tel.: +(37410) 539425-28, ֆաքս/fax: +(37410) 538641

Էլ.փոստ/e-mail: [unitrans@arminco.com](mailto:unitrans@arminco.com), <http://www.unitrans.am>



UNITRANS ՅՈՒՆԻՏՐԱՆՍ

Ձեր փորձառու գործընկերը բեռնափոխադրումների աշխարհում

Your experienced partner in global transportation

# Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

*Շահութաբերության և մրցունակության ապահովման նոր ձևապարհ, որը նաև կպատճառի բավարարվածության զգացում*

Հայաստանում Ամերիկայի Արևոտի Պալատ

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը (ԿՍՊ) ընդհանուր առմամբ սահմանված է որպես «սոցիալական և շրջակա միջավայրի մտահոգությունների կամավոր ինտեգրացումը առևտրային գործառնություններում» Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հասկացությունն այդքան էլ նոր չէ, մինչդեռ դրա կիրառումը նոր է, հատկապես զարգացող երկրների բիզնեսների շրջանում: Անցյալում, շատ բիզնեսներ ԿՍՊ-ին վերաբերում էին որպես սոցիալական կամ բարեգործական աշխատանք և որպես հանրության հետ կապերի գործառնություն: Այժմ, շատ ընկերություններ գտնում են, որ ԿՍՊ-ն իրենց բիզնեսի անբաժան մասն է, քանի որ այն կարող է դրական ազդեցություն ունենալ շահույթի վրա: Այս հոդվածը կընդգծի ԿՍՊ-ի մի քանի հիմնական սկզբունքները և կփորձի ներկայացնել ավելի կշռադատված պատկեր այն մասին, թե ինչ է ԿՍՊ-ն: Ամերիկայի առևտրի պալատի անդամների կողմից գրված մյուս բնութագրող հոդվածներում օրինակներ կտրամադրվեն այն մասին, թե ինչ է տեղի ունենում Հայաստանում, և հուսով ենք ընթերցողին տրամադրել նաև ԿՍՊ-ի մոտեցման լավագույն փորձի որոշ օրինակներ:

Խորհրդային Միության օրոք շատ պետական ձեռնարկություններ կիրառում էին ԿՍՊ-ն՝ իրենց աշխատակիցներին ջրի և էլեկտրականության մատակարարման ծառայություններ, մշակութային և մարզական կառույցներ, ինչպես նաև բնակարաններ տրամադրելով: Չնայած, վերջին հաշվով, պետությունն էր «տնօրինում» այդ սեփականությունը և ղեկավարում ծառայությունները, սակայն ձեռնարկություններն էին կրում իրենց աշխատակիցների մասին հոգ տանելու և համայնքի համար այս գործողություններն իրականացնելու պատասխանատվությունը: Հետ-խորհրդային մթնոլորտում, գործարարները պակասեցրին իրենց սոցիալական պարտականությունները, որպեսզի կարողանան գոյատևել շուկայական հարաբերությունների համակարգի վրա հիմնված տնտեսության անցումային շրջանում: Շատերը, եթե ոչ բոլորը, հրաժարվեցին իրենց աշխատակիցներին բնակարան և կոմունալ ծառայություններ տրամադրելուց, որը շատ քաղաքացիների մոտ առաջացրեց վրդովմունք, որ նոր գործարար խավը իր աշխատողների կամ համայնքի մասին հոգ չի տանում, և ուզում է միայն ինքը հարստանալ:

Շատ բիզնես ղեկավարներ վատ էին զգում, որ այսպիսի իրավիճակ է ստեղծվել, բայց նոր տնտեսական իրականությունը հնարավորություն չէր տալիս նրանց ուղղակիորեն աջակցություն տրամադրել այն չափով և շրջանակներում, ինչ առաջ: Հետ-խորհրդային պետություններից շատերում ԿՍՊ-ի ներկայիս վիճակը հենց դրա հետևանքն է: Շատ բիզնեսներ կարծում են, որ ԿՍՊ-ն բարեգործական գործունեություն է, ինչպես օրինակ Սուրբ Ծնունդի կապակցությամբ ծնողագուրկ երեխաներին խաղալիքներ տալը կամ հաշմանդամ մարդկանց համար որևէ միջոցառման հովանավորությունը: Չնայած որ, այս գործողություններն անշուշտ որակավորվում են որպես ԿՍՊ գործողություններ, դրանք իրենց բնույթով ավելի մարտավարական են, քան ռազմավարական, և որպես այդպիսին բիզնես գործառնությունների վրա փոխակերպող ազդեցություն չեն ունենում, ինչպիսին կարող է ունենալ ԿՍՊ ռազմավարությունը, եթե այն սերտորեն ինտեգրվի բիզնես ծրագրի մեջ:

Ներկայումս մի քանի գործոն է դրդում հետ-խորհրդային միջավայրի բազմաթիվ ընկերությունների՝ ընդունելու ԿՍՊ ռազմավարություն: Նախ, օտարերկրյա ներդրողները փորձում են ներդրակցել իրենց արտասահմանյան դուստր ձեռնարկություններում կամ մասնաճյուղերում գործարար փորձի արժեքներն իրենց հայրենիքում գտնվող մայր ընկերության արժեքների հետ: Երկրորդ, Եվրամիությանն ինտեգրվելու և միջազգային դաշնագրերին, ինչպես օրինակ Միավորված ազգերի գլոբալ համաձայնագրին միանալու ավելի մեծ ձգտումը դրդում են ընկերություններին վերանայել ուրիշներին միանալու իրենց մարտավարությունն ավելի խստացող միջազգային չափորոշիչներին համապատասխանելու համար՝ թելադրանքով, թե կամավոր: Երրորդ, ՀԿ-ները և հանրային շահագրգիռ խմբերը դրդում են ընկերություններին ավելի համահունչ լինել իրենց միջավայրին և ավելի մեծ դեր ունենալ իրենց աշխատակիցների, այն համայնքի և հասարակության բարեկեցության ապահովման գործում, որտեղ նրանք գործում են: Չորրորդ, հիմա, երբ հետ-խորհրդային գործարար միջավայրը կայունացել է և աճի տեմպն ավելանում է, շատ բիզնես ղեկավարներ ուզում են ավելի ակտիվ դեր ունենալ իրենց ընկերության կայունության ռազմավարության մշակման գործում:



Կարևոր է նշել, որ էմպիրիկ հետազոտության այդքան էլ մեծ հիմքեր չկան ենթադրելու, որ ԿՄՊ մարտավարության իրականացումը ուղղակիորեն բարելավում է ընկերության շահութաբերությունը: Այս թեմայով հետազոտությունն անկասկած միանշանակ չէ, և ըստ որոշ հետազոտությունների, օգուտները ստացվում են նախնական ռազմավարության իրականացումից տարիներ հետո: Որոշ ընկերություններ հետևում են այն տեսությամբ, որ ԿՄՊ-ում ներդրումը հակասում է անմիջական շահույթ ստանալու իրենց հնարավորությանը, որը հատուցվում է ավելի շուտ շահութաբեր նպատակներին հասնելու և բաժնետոմսերի գներից ստացվող կարճաժամկետ եկամուտների շնորհիվ, քան կայուն մարտավարության ստեղծմամբ, որի օգուտները շոշափելի չեն լինի դեռևս մի քանի տարի: Ինչպես Դավիթ Քավեր-Գուդվինն է առաջարկում վերջերս թողարկված Մշակութային տեղաշարժեր հոդվածում. «Իրականում հարցն այն չէ, որ բոլոր ընկերությունները պետք է կատարեն ԿՄՊ նույն ձևով, այլ այն, որ ընկերությունները պետք է ԿՄՊ-ի որոշ յուրահատկությունները հարմարեցնեն իրենց բիզնեսի մարտավարությանը՝ ավելի մրցունակ դառնալու համար: ԿՄՊ-ն կարճաժամկետ շահութաբերության

Ընդհանուր սոցիալական հարցեր. սոցիալական հարցեր, որոնց վրա մեծապես չեն ներգործում ընկերության գործառնությունները և որոնք նյութապես չեն ազդում նրա երկարաժամկետ մրցունակության վրա:

Արժեշտային սոցիալական ազդեցությունը. սոցիալական հարցեր, որոնց վրա մեծապես ներգործում է ընկերության բնականոն բիզնես գործունեությունը:

Մրցակցային միջավայրի սոցիալական գործոններ. արտաքին միջավայրի սոցիալական հարցերը, որոնք մեծապես ներգործում են ընկերության մրցունակության հիմքում ընկած շարժառիթի վրա այն վայրերում, որտեղ դրանք գործում են:

Ստորև տես Պորտերի և Կրամերի սխեման հասարակության մեջ կորպորատիվ ներգրավվածության ռազմավարական մոտեցման մասին:

Այս սխեման կարող է ընկերության համար ստեղծել մոդել կորպորատիվ սոցիալական ծրագիր կազմելու համար, երբ որոշվի, թե որ սոցիալական հարցերին են նրանք ուզում անդրադառնալ: Ինչպես նշել են Պորտերն

Ընդհանուր սոցիալական ազդեցություն	Արժեշտային սոցիալական ազդեցությունը	Մրցակցային միջավայրի սոցիալական գործոնները
Լավ քաղաքացիություն	Նվազեցնել արժեշտային գործունեության վնասը	Ռազմավարական բարեկարգություն, որն օգտագործում է կարողությունները մրցունակ միջավայրի ցայտուն բնագավառները բարելավելու համար
<b>Արձագանքող ԿՄՊ</b>	Ռազմավարությունը կիրառելու ժամանակ արժեշտային գործունեությունը փոխարկել հասարակության օգուտների	<b>Ռազմավարական ԿՄՊ</b>

հետ կապելու փոխարեն անհրաժեշտ է հաշվի առնել ԿՄՊ-ի երկարաժամկետ օգուտների ավելի լավ գնահատումը»:

Հիմա, երբ ԿՄՊ-ն քննարկվում է հետ-խորհրդային շատ երկրներում, դժվարություն է ներկայացնում ոչ թե գործարարներին ասելը, թե ինչու իրենք պետք է զբաղվեն այս գործունեությամբ, այլ իրենց առաջնահերթությունները հասկանալը, ինչպես նաև այն, թե ինչպես է ԿՄՊ-ն ներգրավվում դրանց մեջ: Մայքլ Ե. Պորտերը և Մարկ Ռ. Կրամերը իրենց «Ռազմավարությունը և հասարակությունը. Մրցակցային առավելության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության միջև կապը» հոդվածում նախագծել են մի կառուցվածք, որի միջոցով գործարարները կարող են սահմանել սոցիալական հարցերի առաջնահերթություն և անդրադառնալ նրանց, որոնք ավելի շատ են վերաբերում իրենց բիզնես ռազմավարությանը: Հակիրճ, նրանք կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

ու Կրամերը. «Կորպորատիվ սոցիալական ծրագիրը համայնքիակնկալիքներից բացի տեսնում է սոցիալական և տնտեսական օգուտներ ձեռքբերելու միաժամանակյա հնարավորությունները: Այն վնասը նվազեցնելուց անցնում է դեպի կորպորատիվ ռազմավարությունն իրագործելու համար ուղիներ որոնելուն՝ սոցիալական պայմանները կատարելագործելու միջոցով: Ինչպես արձագանքող ԿՄՊ-ն, այնպես էլ ռազմավարական ԿՄՊ-ն անհրաժեշտ են կորպորատիվ սոցիալական ծրագիր ստեղծելու համար, սակայն ընկերությունը պետք է առաջ շարժվի ռազմավարական ԿՄՊ-ի ուղղությամբ, որովհետև ընկերությունները կարող են ավելի էական ազդեցություն ունենալ և ավելի մեծ հատուցում ստանալ իրենց գործողություններից:

Արձագանքող ԿՄՊ-ն ունի երկու հիմունքներ. հանդես գալ որպես լավ կորպորատիվ քաղաքացի, և նվազեցնել գործարար գործունեությունից առկա կամ հավանական բացասական ազդեցությունը: Արձագանքող ԿՄՊ-ի

գործողությունները կարող են ներառել կորպորատիվ կառույցներին մոտ գտնվող միջնակարգ դպրոցին աջակցելը, ծառատունկը էկոլոգիապես զգայուն տարածքում, որտեղ ընկերությունն աշխատում է, կամ աշխատակիցներին այլ աշխատանքի համար վերապատրաստելը, եթե նրանց կրճատելու են: Արձագանքող ԿՄՊ-ի օրինակ է Վրաստանում Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (ԲԹՋ) նավթամուղի վրա Բրիթիշ Փեթրոլյումի աշխատանքը: Բրիթիշ Փեթրոլյումը նավթամուղի երկայնքով տարածքի համայնքներում վերանորոգել է դպրոցներն ու ջեռուցում անցկացրել, և միջոցներ է նվիրաբերել տարբեր էկոլոգիական խմբերին, երբ նավթամուղը անցնում էր Բորժոմի-Ղարազաուլի ազգային պարկի էկոլոգիապես զգայուն տարածքով: ԲՓ-ն նաև աշխատել է էկոլոգիական խմբերի հետ շրջակա միջավայրի վրա նավթամուղի նախագծի ազդեցությունը վերահսկող համակարգ մշակելու և էկոլոգիական վերահսկող կազմակերպություն ստեղծելու համար: Սա վեր է հանում արձագանքող ԿՄՊ-ի գլխավոր կողմը՝ նախագծի նպատակների արդյունավետ վերահսկումն ու գնահատումը: Որոշ ընկերություններ հավատում են, որ կարող են սոցիալական փոփոխության հասնել կազմակերպությանը գումար նվիրաբերելով, սակայն նրանց աշխատանքը շատ ավելի արդյունավետ է, եթե նրանք վերահսկման և գնահատման կարողությունների հետ մեկտեղ ունեն նաև նպատակներ և խնդիրներ մինչև արձագանքող ԿՄՊ-ի գործողությունները նախաձեռնելը:

Ռ-ազմավարական ԿՄՊ-ն ներառում է ԿՄՊ գործունեությունը որպես մրցակցային առավելություն դիտելը, նորարարությունները, և «ինչպես ներսից-դուրս, այնպես էլ դրսից-ներս գործոնների միասնական աշխատանք»-ի ընդգրկումը ընկերության և իր համայնքի միջև ընդհանուր արժեքներ ստեղծելու համար: Այս մոտեցման օրինակ է հանդիսանում Տոյոտայի Փրյուս ավտոմեքենայի ստեղծումը: Տոյոտան հասկացավ, որ բենզինով/էլեկտրականությամբ աշխատող հիբրիդային շարժիչներն իսկական նորամուծություն էին, որն ի վերջո կարելի է տարածել նաև մնացած ապրանքային զծերում՝ մրցակցային առավելություն ստեղծելու համար: Տոյոտայի հիբրիդային ավտոմեքենաները սպառում էին սովորական մեքենաների օգտագործած բենզինի մոտ կեսը, արտանետում էին մոտ 10% ավելի ազոտային գազ, և նա կարողացավ արդյունավետորեն իրացնել իր արտադրանքը՝ կենտրոնանալով ավելի էկոլոգիապես ընդունելի տեխնոլոգիաներ սպառողների նախընտրության տեղաշարժերի վրա:

Դրա արդյունքում Տոյոտայի հիբրիդ տեխնոլոգիան իր դասի մեջ համարվում է գլոբալ ստանդարտ և նա արտադրանքի զարգացման մեջ մի քանի սերունդ առաջ է անցել իր մրցակիցներից, որոնք այժմ «մրցակազմի» մեջ են մտել այս հաջորդ սերնդի տեխնոլոգիային հասնելու համար:

Ռ-ազմավարական ԿՄՊ-ի մեկ ուրիշ և, իհարկե, շատ կարևոր կողմը ընկերության և իր համայնքի միջև փոխադարձ հարաբերության ամրապնդումն է: Ինչպես Պորտերն ու Կրամերն են նշում. «Բնորոշ է, որ ինչքան ավելի սերտորեն է կապված սոցիալական հարցը ընկերության բիզնեսին, այնքան ավելի մեծ է ընկերության ռեսուրսները և կարողությունները օգտագործելու և հասարակությանը օգուտ բերելու հնարավորությունը:» Մթաբբակսը, օրինակ, ցույց տվեց, որ բարելավել է իր մակնիշի վարկանիշը, մեծացրել սուրճի իրացման ծավալները և բարելավել սուրճ անեցնողների կյանքի մակարդակը՝ ամբողջ աշխարհում ներդրումներ կատարելով սուրճի արտադրության կայուն մեթոդների զարգացման մեջ: Մթաբբակսը Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում սուրճ արտադրողներին ուսուցանում է սուրճի արտադրության նոր տեխնոլոգիաներ՝ նրանց տրամադրելով ավելի բարձր հմտությունների բազա, որպեսզի վեջիկներս ավելի շատ եկամուտ ստանան այս նոր մեթոդներն օգտագործելով: Դա նաև բարենպաստ ազդեցություն է ունենում արտադրողների վրա և մատակարարման շղթայի գործառույթների այլ մակարդակներում, որտեղ կան շրջակա միջավայրի և կայունության հարցեր: Այդպիսով, Մթաբբակսը բարձրացրել է իր արժեքների ամբողջականությունը՝ ստեղծելով մրցակցային առավելություն իր սուրճի համի և մակնիշի վարկանիշի առումով, որը սերտորեն կապված է արտադրությունում և գնման գործընթացում այնպիսի հմտությունների կիրառման հետ, որ այլ սուրճ արտադրողները չունեն: Մթաբբակսի օրինակը ցույց է տալիս Պորտերի և Կրամերի այն կարծիքը, որ «մեծ մասամբ ռազմավարական ԿՄՊ-ն առաջ է գալիս երբ ընկերությունը իր արժեքի առաջարկի վրա ավելացնում է սոցիալական գործոնը, սոցիալական ազդեցությունը դարձնելով ընդհանուր ռազմավարության անբաժան մաս:

Վերոնշյալ մոդելը ցույց է տալիս, որ ԿՄՊ հիմք ստեղծելու համար մեկ լավ սահմանված ձև չկա, սակայն գործարարները կարող են օգուտ ստանալ ԿՄՊ գործողություններից՝ առանձնանալով այս բնագավառում: Առանց ԿՄՊ գործողությունների բարոյախոսական հիմնավորումների մեջ խորանալու, գործարարները կարող են բարձրացնել իրենց մրցակցային առավելությունը նորամուծությունների միջոցով, ուժեղացնել իրենց մակնիշի վարկանիշը, և ամրապնդել իրենց հանրության հետ կապերը համակարգված ԿՄՊ ռազմավարություն ստեղծելու միջոցով: Եթե արձագանքող ԿՄՊ գործունեության մեջ ներգրավումը կարող է ընկերությանը օգուտներ բերել, ապա ռազմավարական ԿՄՊ հիմքի ինտեգրացումը կարող է ընկերության կողմից ստացվող օգուտների վրա բազմապատկող ազդեցություն ունենալ, որովհետև այն ունի շատ տարբեր բնագավառների վրա ներազդելու հասանելիություն, ինչպես ֆինանսական, այնպես էլ սոցիալական:

# Հայաստանում կորպորատիվ սոցիալական ներդրումներ 2006-2008թթ. Փոփոխություններ վերաբերմունքում

Եվրասիա Համագործակցություն Հիմնադրամ



Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն, Կորպորատիվ բարեգործություն և կորպորատիվ սոցիալական ներդրումներ տերմինները մի քանի տարի առաջ Հայաստանի գործարար համայնքի մեծ մասին անծանոթ էին: Այս հասկացություններն արդեն դառնում են ավելի ընկալելի և որոշ հայկական նախաձեռնող գործարարներ արդեն մեկնաբանում հատուկ բարեգործական աշխատանքներից անցել են ավելի ռազմավարական սոցիալական ներդրումային ծրագրերի:

2006թ.-ին Եվրասիա Համագործակցության Հիմնադրամը (ԵՀՀ) անցկացրեց բարեգործական աշխատանքների գնահատում խոշոր և միջին գործարարների շրջանում, որն ուսումնասիրեց այս գործունեության մեջ ՀԿ-բիզնես ընկերակցությունների դերը: Համաձայն գնահատման արդյունքների, Հայաստանի գործարարների շրջանում սոցիալական ներդրման ընկալումը շատ թույլ է: Մեր հարցման պատասխաններից պարզվել է, որ գործարարների շրջանում սոցիալական ներդրման գործողությունները սովորաբար չեն գերազանցում տարեկան շրջանառության 1%-ը (շատ երկրներում ստանդարտ է համարվում շրջանառության 3-5%-ը): Գնահատման ժամանակ գործարարների կողմից, սոցիալական ծախսերից ձեռք բերված, բարեգործական նվիրատվություններ են արվել գիտության, մշակույթի, առողջապահության և կրթության ոլորտներում: Այս նվիրատվությունները, սակայն, մեծամասամբ միանգամյա և ինքնաբերական բնույթ էին կրում, և չէին հանդիսանում մշակված սոցիալական ներդրումների ռազմավարության կամ երկարաժամկետ ծրագրի մաս: 2006թ.-ին հարցված գործարար մարդկանցից շատերը ընդգծել են, որ սոցիալական ներդրումների հիմնական խոչընդոտը այն ընկալումն է, որ այս ներդրումները չեն հանգեցնի երկարաժամկետ դրական փոփոխության:

ԵՀՀ-ն սահմանում է կորպորատիվ սոցիալական ներդրումը (ԿՄՆ) որպես նվիրաբերում, որն ունի էական սոցիալական ազդեցություն՝ միաժամանակ բարելավելով բիզնեսի երկարաժամկետ մրցակցային ներուժը: Ի տարբերություն ավանդական բարեգործության գործողությունների, կորպորատիվ սոցիալական ներդրումը ներառում է ընկերության առաքելությունը, բիզնես ծրագիրը, ռեսուրսները և բարեգործական հետաքրքրությունները միաժամանակ համայնքին օգուտ բերելու և բիզնեսին արժեք ավելացնելու գործին: Մի քանի հայկական ընկերություններ ժամանակից առաջ են անցել

իրենց ԿՄՆ գործունեությունում: Մինուպիս Հայաստան ԻՏ ընկերությունը ստեղծել է բարեգործական հիմնադրամ, որը հովանավորում է կրթական նախաձեռնություններ, այդ թվում՝ ինժեներական կրթություն, Հայաստանի խոշոր համալսարանների հետ համատեղ, ինչպես նաև մրցույթներ ԻՏ ուսանողների համար: Այս կերպ հիմնադրամը օգուտ է տալիս ուսանողությանը և միաժամանակ ծառայում է որպես գործիք Մինուպիսի հետազոտությունների և զարգացման գործառնությունների համար: Աշտարակ Կաթը՝ կաթնամթերք արտադրող առաջատար ընկերություններից մեկը, սահմանային բնակավայրերում, որտեղ գտնվում են իրենց կաթի մշակման կենտրոնները, նվիրվել է դպրոցների, համայնքների և ենթակառուցվածքի զարգացման գործին: Ֆիլիպ Մորիս Հայաստան ընկերությունը մարդասիրական օգնությունից անցել է զարգացման ծրագրերի: 2006թ.-ին ԵՀՀ-ի հետ համատեղ, ընկերությունն օժանդակել է ծանր լսողություն ունեցող 41 երեխաների համար համակարգչային գրագիտության կուրսերի, ինչպես նաև ծանր լսողություն ունեցող աշակերտների համար մասնագիտական (գորգագործություն) ուսուցման անցկացում:

Կորպորատիվ սոցիալական ներդրումը կարող է էական և տևական ազդեցություն ունենալ, եթե այն ճիշտ իրականացվի: ԵՀՀ-ն ենթադրում է, որ Հայաստանի գործարարները կարևոր դեր են խաղալու երկրի զարգացման գործում: Ի՞նչ է անհրաժեշտ դա իրականություն դարձնելու համար. ԵՀՀ-ի կարծիքով անհրաժեշտ է՝ կորպորատիվ սոցիալական ներդրումների հետագա ընկալում, Հայաստանում առկա և նոր ստեղծվող հաջողված մոդելների լայնածավալ հրապարակայնություն, սոցիալական ներդրումներից ստացվող ավելի մեծ շահույթ, որոնք արտացոլված են իրական բիզնես ցուցանիշներում, և, ի վերջո, օրենսդրական դաշտ, որը խթանում է կորպորատիվ նվիրատվությունը:

ԵՀՀ-ն հիմա աշխատում է ամբողջ աշխարհում ընդունված լավագույն փորձը համաժողովների և սեմինարների միջոցով ներկայացնելու ուղղությամբ, ինչպես նաև աշխատում է գործարարների հետ իրենց Կորպորատիվ սոցիալական ներդրումների ծրագրերը նախագծելու, իրականացնելու, վերահսկելու և հաղորդելու նպատակով: Ընկերությունները, որոնք սկսում են կիրառել ԿՄՆ-ն, կարող են բարելավել շահույթները ավելի կառուցողական ծրագրեր մշակելու միջոցով, և փորձում են ավելացնել շահույթները, ինչպես ընկերության, այնպես էլ այդ ծրագրերի շահառուների համար: Չնայած ԿՄՆ-ն Հայաստանում դեռևս դեռատի վիճակում է, սակայն արդեն առկա են դրական փոփոխություններ վերաբերմունքի մեջ:

# ԿՄՊ-ն գործողության մեջ. փորձեր, Ձեզ այն դուր կգա Քեյ-Փի-Էմ-Ջի



«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ն գտնվում է այն կազմակերպությունների շարքում, որոնք առաջինը սկսեցին խթանել ԿՄՊ գիտակցությամբ գործարար միջավայրը Հայաստանում: Լինելով սերտ համագործակցության մեջ արդյունաբերության և հասարակական ոլորտի հետ՝ մենք աջակցել են կազմակերպություններին ավելի լավ կորպորատիվ քաղաքացիներ լինելու իրենց աշխատանքներում՝ այնքանով, ինչքանով դա վերաբերում էր ֆինանսական, հարկային և կառավարման հաշվետվություններին:

Մարդիկ սկսում են վստահել ձեզ, երբ տեսնում են ձեզ գործողության մեջ: Ընկերությունները, հատկապես զարգացող երկրներում, նույնացվում են այն մարդկանց հետ, որոնք աշխատում են այդ ընկերությունում: Շուկայի խոշոր մասնակիցները չեն ցանկանում գործ ունենալ այն կազմակերպությունների հետ, որոնք հայտնի չեն որպես էթիկայի և պատասխանատվության բարձր չափանիշներ ունեցող կազմակերպություններ: ԿՄՊ-ն եզակի հնարավորություն է տալիս հասարակությանը ձեր ով լինելու մասին հայտնելու և ձեր վարվելակերպը ցույց տալու համար:

Սոցիալական առումով, այնուամենայնիվ, Հայաստանում և ԱՊՀ երկրներում շատ ընկերություններ չկան, որոնք քարոզում են ԿՄՊ-ն որպես մտածելակերպ:

Այն վստահությունը, որ Քեյ-Փի-Էմ-Ջի-ն, ինչպես նաև այլ կազմակերպություններ, ձեռք են բերել, մեծամասամբ վերագրվում է այն արժեքներին, որոնք հանդիսանում են ԿՄՊ քաղաքականության անբաժան մաս, ինչպես օրինակ Քեյ-Փի-Էմ-Ջի ընկերության «օրինակ ծառայելը», «անհատին հարգելը», «միասին աշխատելը» և, իհարկե, ամենակարևորը, «ազնիվ գործելը»: Աճող մրցակցային միջավայրում արհեստավարժ աշխատակիցները համարվում են հազվագյուտ ռեսուրսներ: Ղեկավարությունը ի մի է բերում բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի ապահովի, որ լավագույն մարդիկ կարողանան աշխատանքի ընդունվել և զարգանալ:

### Լավ պատճառներ

Ինչո՞ւ պետք է ընկերությունը ներդրումներ կատարի ԿՄՊ-ում: Ինչպե՞ս դրանից կշահի ձեր կազմակերպությանը:

Հրապարակայնություն: Անշուշտ: ԿՄՊ գործունեության հրապարակայնացումը շատ լավ ձև է ձեր կազմակերպության անունը հանրաչանաչ դարձնելու համար:

Թերևս կան երկու գործոններ, որոնք, գովազդային բնույթից բացի, այլ նշանակություն են տալիս ԿՄՊ-ին.

1. Վստահություն
2. Նախընտրելի գործատու

Վստահությունը, անխոս, ամենաարժեքավոր որակն է, որ բիզնեսը կարող է ունենալ: Կորպորատիվ վարկանիշի ձեռքբերումը բավական երկար է տևում, և շատ դժվար է այն պահպանել:



## Արդյունքները

Մենք բոլորս ցանկանում ենք արդյունքեր տեսնել: Ի վերջո մենք դրա համար ենք աշխատում: Լիովին գիտակցելով արդեն քննարկված երկու գործոնները՝ արժե նշել, որ ԿՄՊ-ի արդյունքները կարող են գերակայել ԿՄՊ-ում ներգրավվելու բոլոր այլ փաստարկների հանդեպ:

Հնարավորությունները բազմաթիվ են: Խրախուսող է գիտակցել, թե ինչ կարելի է անել փոքրաթիվ գործընկերների նվազագույն ներդրմամբ: Դուք կարող եք ներգրավել մեկանգամյա, ինչպես նաև շարունակական ծրագրերում:

Սկսելով մեկանգամյա միջոցառումներից՝ Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիան ավանդություն է դարձրել մի քանի օր տրամադրել մանկատների երեխաներին Սուրբ Ծնունդից առաջ «նվերների այցելություն» կատարելու համար:

Ներկայումս, Քեյ-Փի-Էմ-Ջի ընկերությունը ներգրավվում է ավելի երկարաժամկետ ծրագրերում, ինչպես օրինակ կարիքավոր մարդկանց համար գյուղական վայրերում տների կառուցմանը կամ վերանորոգմանն օժանդակելը:

Աշխատակցի տեսանկյունից ԿՄՊ-ն.


- Բարձրացնում է թիմի ոգին,
- Ստեղծում է դրական աշխատանքային մթնոլորտ,
- Հնարավորություն է տալիս ղեկավարության հետ հանդիպել ոչ պաշտոնական մթնոլորտում,
- Ընդլայնում է «ինչն է քեզ դուր գալիս քո ընկերությունում» ցանկը:

Մեծ թվով երկրներում Քեյ-Փի-Էմ-Ջի-ն համարվում է նախընտրելի գործատու և ԿՄՊ-ն իր վճռական դերն ունի այս հարցում:

## Այդքան դյուրի՞ն

ԿՄՊ-ի քաղաքականություն ընտրելը իրականում կախված է այն ներգրավվածության աստիճանից, որում դուք հետաքրքրված եք: Որպես սկիզբ, արտաքին ուղղվածության ԿՄՊ ծրագրի համար կարելի է ձեռնարկել հետևյալ քայլերը.

- 1) Ընտրեք նախընտրելի ծրագիր մասնակցության համար,
- 2) Նախաձեռնության մասին հայտնեք ՀԿ-ներին/միջնորդ կազմակերպությանը՝ ծրագիրը պաշտոնապես ձևակերպելու և գործողությունների համատեղ իրականացման համար,
- 3) Տրամադրեք ֆինանսական կամ կամավորական օժանդակություն:



Եթե նույնիսկ երբեք չեք մտածել ԿՄՊ-ի մասին, դժվար չէ գտնել մի բան, ինչը իրոք կուզեիք փոխել: Մտածեք, թե ձեր շրջապատում ձեզ ինչը դուր չի գալիս: Ա՞դրբ, անտուն մարդի՞կ, չկրթված աշխատակիցները: Շնորհավորում ենք: Այժմ դուք ունեք ծրագիր գործընթացը սկսելու համար:

# Կասկադի Ռազմավարական ԿՄՊ Ուղղվածությունը

## Կասկադ Կապիտալ Հոլդինգս



Ամբողջ աշ- զեցնելու վարկավորման տոկոսները՝ տրամադրելով խարհում, թե իրական աճ և զարգացման հնարավորություններ խոշոր, թե այն համայնքներում, որտեղ առկա է նախկինում փոքր ընկե- գոյատևման վարկերի իրականացման փորձ:

ությունները կիրառում են կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը (ԿՄՊ) և կորպորատիվ սոցիալական ներդրումները (ԿՄՆ) որպես իրենց վարկանիշը բարելավելու, համայնքի զարգացմանը աջակցելու և իրենց մակնիշի ինքնությունն ամրապնդելու ձև: Գլոբալ առումով սա շատ տարածված և ընդունված պրակտիկա է, սակայն, Հայաստանում ԿՄՊ/ԿՄՆ կիրառումը նոր է սկսում ձևավորվել:

Կասկադ Կրեդիտը ոչ միայն կենտրոնանում է վարկառուներից օգուտ ստանալու վրա, այլ նաև ընկերությունը և իր բաժնետերը հստակ սահմանել են, որ շահույթը ընկերության միակ շարժառիթը չէ, հատկապես գյուղական վայրերում, որտեղ մեր նպատակն է խթանել գյուղական տնտեսության կենսամակարդակը հատուկ մշակված և մատչելի ֆինանսական ծառայությունների/ապրանքների միջոցով:

Կասկադ Կապիտալ Հոլդինգսի 100% սեփականատեր է հանդիսանում բարեգործական Գաֆեանեան Ընտանիք հիմնադրամը (ԳԸՀ): Երբ խոսք է գնում օտարերկրյա և ներքին ԿՄՊ/ԿՄՆ-ի մասին, ԳԸՀ-ն կարող է համարվել չեմպիոն հայկական սփյուռքում: Կասկադ կապիտալ հոլդինգսը և իր կազմում ընդգրկված ընկերությունները՝ Կասկադ Բանկը, Կասկադ Քրեդիտը, Կասկադ Ինժեներինգը, Կասկադ Ինվեստմենտսը և Կասկադ Կրեդիտը, զարգացնում են ԿՄՊ/ԿՄՆ-ին յուրահատուկ մոտեցում տեղական միջավայրում:

Կասկադ կրեդիտի մասնակցությունը այս տեսակ ԿՄՊ/ԿՄՆ գործընթացներին ոչ միայն նպատակաուղղված է Հայաստանում գյուղական վայրերի ընդհանուր զարգացմանը աջակցելուն, այլ նաև ծառայում է որպես օրինակ, թե ինչպես վստահության, թափանցիկության, կորպորատիվ կառավարման և հաճախորդի սպասարկման բարձր չափորոշիչներով օժտված ընկերությունները կարող են աջակցել ամբողջ ազգի զարգացմանը:

ԿՄՊ/ԿՄՆ ծրագրերը արդյունավետորեն կատարելու համար Կասկադ Կապիտալ հոլդինգսը կհամագործակցի կայացած և փորձված կազմակերպությունների հետ, որոնք հավելյալ ուղիներ են փնտրում Հայաստանի զարգացմանը աջակցելու համար: Այս համագործակցության միջոցով մենք ուղիներ կգտնենք միասին աշխատելու համար՝ մեր փոխադարձ զարգացման նպատակներին հասնելու և գերազանցելու նպատակով: Մենք ուշադիր կվերահսկենք բոլոր համատեղ քարոզարշավները ծառայությունների բարձր չափանիշներ և կատարողականության շարունակական բարելավումն ապահովելու համար:

Բացի այդ, ԿԸՀ-ն կատարում է կարևոր դեր ուսուցանման, վերապատրաստման, և հնարավոր ներդրողների հետ հարաբերություններ կառուցելու գործում, ինչպես նաև խրաբուսում է սփյուռքի կողմից ներդրումների կատարումը:

Մայիսի 14-ին Կասկադ Կրեդիտը (ԿԿր) և Հայաստանի մանուկներ հիմնադրամը (ՀՄՀ) հայտարարեցին գործընկերության մասին՝ նպատակ ունենալով հատուկ վարկային հնարավորություններ առաջարկել ՀՀ այն գյուղական վայրերին, որտեղ ՀՄՀ-ն այժմ գործում է: Իրենց ռեսուրսները համատեղելով ԿԿր-ն և ՀՄՀ-ն ավելի մեծ հնարավորություն կունենան գնահատելու և բավարարելու իրենց գյուղական հայտատուների կարիքները: Վարկեր վերցնելու ծախսերը գյուղական վայրերում ավանդաբար բավական բարձր են: ԿԿր-ն խելամիտ որոշում կայացրեց նվա-



# NASDAQ OMX Հայաստան

## ԿՄՊ-ի հեռանկարը



Ինչպես ցանկացած գործառնականության, այն էլ ունի իր խնդիրները:

Ել Նասդակ Օ-Էմ-Էքս-ի համար հարցն այն չէ, թե արդյո՞ք մենք պետք է ակտիվորեն կիրառենք ԿՄՊ-ն, այլ այն, թե ինչպե՞ս պետք է այն կիրառենք: Լինելով մի ընկերություն, որի գործունեությունը բազմաթիվ երկրներում ներգործում է շատ բաժնետերերի վրա, մենք անընդհատ մեզ պետք է հարց տանք, թե ինչպես վարենք մեր գործունեությունը, որպեսզի լավագույնս օգուտ բերենք մեր բաժնետերերին, ինչպես նաև ընդհանուր առմամբ հասարակությանը:

ԿՄՊ-ն կարող է տարբեր ձևերով դրսևորվել. բարեգործական նվիրատվություններից սկսած մինչև նշանակալի պատճառները և դրական ուղղվածությամբ ծրագրերը, որոնք վերաբերում են օրինակ սոցիալական կամ էկոլոգիական հիմնախնդիրներին: Այնուամենայնիվ, այստեղ միշտ կա հավանական հակասություն. արդյո՞ք իր բաժնետերերի գումարները բաշխելը իրոք կախված է ընկերության ղեկավարության հայեցողությունից: Արդյո՞ք ԿՄՊ ծրագիրը, մյուս ծրագրերի նման պետք է ենթարկվի ծախս-օգուտ խիստ վերլուծության և ներդրումների շահույթի պահանջներին: Բարեկե, իդեալական կլիներ, եթե ԿՄՊ-ի արժեքներն արդեն իսկ ամբողջով լինեին ընկերության գործարար մոդելի և ռազմավարության մեջ, որպեսզի բաժնետերերին և հասարակությանը ծառայելու նպատակները հավասարակշռված լինեն: Դա կարող է այդքան էլ դժվար չլինել, ինչպես թվում է. հաճախորդների համար արժեքավոր ծառայություններ և ապրանքներ տրամադրելով՝ ընկերությունները սովորաբար արդեն հասարակությանը օգուտ են տալիս իրենց նորմալ գործարար գործունեությամբ: Արդեն իսկ ռազմավարական գործընթացում ավելացնելով ԿՄՊ հեռանկարը, ընկերությունների գործունեության դրական ազդեցությունը կարող է մեծապես աճել:

Նասդակ Օ-Էմ-Էքս -ի գործունեությունն ուղղված է արդյունավետ ֆինանսական շուկաների ստեղծմանը: Հայտնի է, որ արդյունավետ ֆինանսական համակարգը և դրա մաս կազմող ֆինանսական շուկաները, կարևոր դեր են խաղում երկրի ընդհանուր տնտեսական զարգացման գործում: Ֆինանսական շուկաները, արդյունավետ գործող բանկային և ապահովագրական համակարգերի հետ համատեղ տեղաբաշխում են ռեսուրսներն այնտեղ, որտեղ դրանք առավել շատ են անհրաժեշտ և ամենալավն են օգտագործվում, և օգնում են կառավարել և բաժանել ֆինանսական ռիսկը: Սա իր հերթին հանգեցնում է նոր աշխատատեղերի ստեղծմանը, տնտեսության զարգացմանը և հասարակության բարեկեցության ապահովմանը:

Այն շուկաներում, որտեղ Նասդակ Օ-Էմ-Էքս-ը ավանդաբար գործում է՝ ԱՄՆ և հյուսիսային Եվրոպա, արդյունավետ ֆինանսական շուկաները սովորաբար զարմանք չեն առաջացնում: Այդ շուկաներում գործելով՝ դժվար չէ մոռանալ, թե որքան վճռորոշ էին նրանք բարգավաճող հասարակությունն ձևավորելու գործում:

Այնուամենայնիվ, դառնալով ավելի ու ավելի ակտիվ զարգացող շուկաներում, հատկապես Արևելյան Եվրոպայում, ֆինանսական շուկաների զարգացման գործում էլ ավելի ցայտուն և կարևոր դարձավ Նասդակ Օ-Էմ-Էքս -ի համար: ԿՄՊ-ն դարձավ քննարկման առարկա ոչ միայն տարեկան Սուրբ Ծննդի նվիրատվություններ կատարելիս, այլ նաև խորհրդատվական ծրագրերի և ներդրումային գործերի իրականացման ժամանակ:

Շատ նորը հարց է, թե ինչպես չափել ԿՄՊ գործունեությունը ձգտում են իրականացնել ցանկացած թվարկված կազմակերպության հիմնական խնդիրը՝ բաժնետերի արժեքը մեծացնելը: Սակայն պարզ է, որ որոշ գործարար նախաձեռնություններ տրամադրում են դրական օգուտների և հասարակության վրա դրական ազդեցության շատ ուշագրավ համակցություն, և հայաստանյան շուկան զարգացնելու Նասդակ Օ-Էմ-Էքս-ի ձգտումը դրա վառ օրինակն է: Տեսնելով Հայաստանի տնտեսության ներուժը և, թե ինչպես հայկական հասարակությունը կշահի, եթե զարգացվի կապիտալի շուկան, Հայաստանի շուկա մուտք գործելու որոշումը հեշտությամբ կայացվեց:

Լինելով Հայաստանի Ֆոնդային Բորսայի (ՀՖԲ) և Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի (ՀԿԴ) լիիրավ սեփականատերը՝ Նասդակ Օ-Էմ-Էքս-ը այժմ Հայաստանում գլխավոր դեր է խաղում երեք հիմնական ֆինանսական շուկաները՝ արժույթի, պետական պարտատոմսերի և կորպորատիվ պարտատոմսերի և բաժնետոմսերի, աշխատացնելու և զարգացնելու գործում: Հայաստանի արժույթի շուկան օգտագործում է ՀՖԲ-ի առևտրի համակարգը, երբ սահմանված են ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքները և օրական միլիոնավոր դոլարներ են փոխանակվում: Հուսալի առևտրային գործիք և իրական ժամանակում արժույթի փոխարժեքի մասին տեղեկություններ տրամադրելով՝ ՀՖԲ-ն օժանդակում է միջազգային գործունեություն ծավալող գործարարներին և նվազեցնում է մանրածախ փոխանակման կետերում ոչ թափանցիկ գործողության հնարավորությունը՝ նվազեցնելով զինը հասարակ հայաստանցիների համար:

Այս տարվանից սկսած ՀՖԲ-ն նաև ասպարեզ է տրամադրում հայկական պետական պարտատոմսերի վաճառքի համար: Այս գործիքների առևտրի գործընթացը պարզեցնելով՝ մենք օժանդակում ենք նաև կարևոր

պետական ծրագրերի և գործողությունների ապահով ֆինանսավորման կենսական գործընթացին:

Արժույթի և պետական պարտատոմսերի շուկաներն արդեն գործում են Հայաստանում: Հայաստանում Նաադակ 0-Էմ-Էքս-ի ամենակարևոր ներդրումը կլինի կորպորատիվ պարտատոմսերի և բաժնետոմսերի շուկայի բարելավումը, որոնց թույլ զարգացվածությունը այսօր վնասում է Հայաստանի տնտեսությանը: Հայաստանը՝ խոշոր ներդրումների կարիք ունեցող, ցածր աշխատավարձերով և աշխատազրկության բարձր տոկոս ունեցող երկիր լինելով, կարող է հանդիսանալ գրավիչ ներդրումային երկիր բարձր շահույթների լավ ներուժով: Այնուամենայնիվ, քանի որ կապիտալի շուկան չէր գործում ինչպես հարկն է, ներդրողներն ու ներդրման կարիք ունեցող ընկերությունները հնարավորություն չունեին հանդիպելու դյուրիրացնելի, թափանցիկ շուկայում և հայկական ընկերությունների ներուժը չի օգտագործվել կապիտալի բացակայության պատճառով:

Երբ ընկերությունը բարձրացնում է կապիտալը արժեթղթի շուկայի միջոցով, այն պետք է լինի նաև թափանցիկ: Ներդրողները պահանջում են պատշաճ աուդիտ և լավ կորպորատիվ ղեկավարում, որպեսզի ապահովեն, որ ընկերության ղեկավարությունը գործում է բաժնետեր-սեփականատերերի շահերից ելնելով իր բոլոր գործողություններում: Մրա առավելությունն նաև այն է, որ ընկերությունները հարկեր են վճարում և ոչ թափանցիկ գործունեություն չեն վարում: Երբ թափանցիկ ընկերությունները կարողանան մեծացնել կապիտալը ավելի ցածր ծախսով, քան իրենց ոչ թափանցիկ մրցակիցները և հաջողությամբ մրցակցել նրանց հետ, դա նշանակալի ազդեցություն կունենա Հայաստանի գործարար միջավայրի վրա: Դրա առավելությունը կլինի նաև այն, որ կարձանագրվի պետական հարկային եկամուտները ան, որն ի վերջո օգուտ կբերի հայ ժողովրդին:

Նաադակ 0-Էմ-Էքս-ի օրինակը եզակի է, բայց նաև բնորոշ: Ցանկացած բիզնես կարող է հասարակությանը տալ իր ուրույն օգուտը և միաժամանակ արժեք ստեղծել իր սեփականատերերի համար: Երբեմն հեշտ է մոռանալ այն անկապտելի օգուտը, որ մենք տալիս ենք որպես գործարարներ. ստեղծում ենք նոր աշխատատեղեր, վճարում ենք հարկեր և օգտակար ապրանքներ են տրամադրում մեր հաճախորդներին: Սակայն ծրագրեր և բիզնես գործողություններ ընտրելու ժամանակ կարևոր է նաև ընդլայնել ԿՄՊ-ի հեռանկարը: Հնարավորությունների աշխարհում ձեռնարկությունը կարող է կատարել բազմաթիվ «լավ գործեր», որոնք դրական կերպով կանդրադառնան նրա շահութաբերության վրա:

**INTRACOM ARMENIA**

[www.intracom.am](http://www.intracom.am)

- Wireless & Wireline Multiservice Broadband Access Systems
- Point-to-Point & Point-to-Multipoint Microwave Transmission Systems
- Triple/Multi-Play Content Delivery Systems
- Network Management Systems
- Operation & Business Support Systems
- DataCom & IT Systems

**INTRACOM ARMENIA LLC**  
 44/2 Hanrapetutyayn Str., 0010 Yerevan, Armenia  
 T +374 10 540 843 F +374 10 540 844  
 intracom@intracom.am

**INTRACOM TELECOM** | **SITRONICS TELECOM SOLUTIONS**



# Join AmCham Today!

The American Chamber of Commerce in Armenia is the leading business association in the country with over 70 members from all business segments. AmCham has been operating in Armenia continuously since 2000. Through advocacy efforts aimed at such areas as tax legislation and customs administration, AmCham represents its Members' business interests in Armenia to the Armenian government, international organizations, and to the wider business community.

AmCham provides an excellent source of information about Armenian business life by publishing the only purely business-oriented magazine in Armenia, and by hosting guest speakers from the Armenian government, international organizations, and from leading businesses.

AmCham also organizes social events like its traditional annual Spring Fundraiser where our members have a good opportunity to meet each other, network, and just have fun!

**Gold Members:** All the benefits of Regular Members, plus,

- + Free logo placement on the back of the AmCham Newsletter.
- + Free full-page advertisement in AmCham Annual Report.
- + 30% discount on AmCham Newsletter advertising.
- + Free one-page company description in AmCham Member business catalogue.
- + Can publish a one-page article in the AmCham Newsletter on a rotating basis.
- + Priority invitations to special international guest speakers.
- + Two free meals at AmCham Member luncheon meetings.
- + Special opportunities to promote their company during AmCham Meetings.

**Regular Members:** All the benefits of Associate Members, plus:

- + Can run for positions on the AmCham Board of Directors.
- + Can vote for Members for positions on the Board of Directors.
- + 20% discount on AmCham Newsletter advertising.

**Associate Members**

- + Receive the AmCham Newsletter.
- + Free half-page company description in AmCham Member business catalogue.
- + Receive invitations to AmCham Member events.
- + Can attend guest speaker events at Member meetings.
- + Have opportunity to determine guest speakers for member meetings.


**Reasons for Joining AmCham**

- + Become a part of a vibrant, active business organization advocating for the interests of over 70 Members.
- + Exclusive guest speakers from all sectors of the Armenian business community.
- + Networking opportunities with the most significant Armenian and international businesses.
- + Sit on committees targeted toward specific business interests.
- + Receive exclusive discounts from other Members as part of our Member to Member Program.
- + Receive our AmCham Newsletter – the only source of English-language business news in Armenia.
- + Advertising discount in the Newsletter with a circulation of over 300 issues and electronic distribution.
- + Invitations to AmCham events and parties.



Become a part of AmCham as we continue to represent Member interests and build on our already strong foundation to further improve the business climate in Armenia!

# Armenian Government Structure

The flow chart below shows the composition of the new government under Mr. Tigran Sargsyan and the relevant officials for each ministry. The chart is current as of April 2008.



## AmCham Gold Members



## AmCham Members by Sector

### Banking & Insurance

ArmSwissBank  
 Cascade Capital Holdings  
 Converse Bank Corporation  
 First Mortgage Company  
 HSBC  
 IngoArmenia  
 London-Yerevan Insurance  
 Washington Capital

### Business & Financial Services

Advanced Engineering Associates  
 International  
 Alpha Plus Consulting  
 Ameria  
 Arlex International  
 Firmplice  
 Grant Thornton Amyot  
 IAB Centre  
 International Legal Consulting  
 KPMG  
 Nasdaq OMX  
 PriceWaterhouseCoopers  
 Resolution Apahovagrakan Broker

### Consumer Goods

ArsOil  
 Coca-Cola HBC Armenia  
 Made in Armenia Direct  
 Megerian Carpet  
 Nina Hovnanian Couture  
 Philip Morris Management Services  
 Treasures of Armenia  
 Sevan

### Energy & Mining

Armenian Copper Programme  
 Blackstairs Energy Armenia  
 Hereward Resources  
 SolarEn  
 TEAM Energy

### Information Technologies

Arminco  
 Hylink  
 Intracom Armenia  
 Lycos  
 Microsoft  
 National Instruments  
 Synopsis Armenia  
 Unicom  
 Virage Logic International

### Infrastructure Development

Ambertco  
 Nomad Express  
 Unitrans  
 Hovnanian International  
 Peak Realty  
 X-Group  
 Zeppelin Armenia

### Marketing & Promotion

ACC Associates  
 DG Contact  
 McCann Erickson  
 Mineh Printing Company

### NGOs & International

#### Organizations

Academy for Educational Development  
 Armenian Assembly of America  
 Cafesjian Museum Foundation  
 Eurasia Partnership Foundation  
 IREX  
 RTI International  
 Social Protections Strengthening  
 Project  
 USDA CARD

#### Tourism & Hospitality Services

Armenia International Airports  
 Armenia Marriott Hotel  
 Austrian Airlines  
 British Midland Airways  
 Jazzve  
 Levon Travel  
 Princess Maneh  
 Square One  
 Tufenkian Hospitality  
 RENCO

#### Miscellaneous / Other

American University of Armenia  
 Armobil Security Service



American Chamber of Commerce in Armenia  
Armenia Marriott Hotel  
Ararat Wing, Room 315  
1 Amiryan St.  
Yerevan, Armenia

Tel: +374 10 599 187  
[amcham@arminco.com](mailto:amcham@arminco.com)  
[www.amcham.am](http://www.amcham.am)